իրենց կորեկը կամ սիմինդը։ Աւելի խորը մտնելուց յետոյ՝ այլ եւս չէք տեսնել սայլորդն իր բլրանման բարձած խոտով, որոնք քաշում են դոմշի լծկանները։ Զկայ դաշտ, չկան ազատ հովիտներ, չկայ սայլի ճանապարհ, անվերջ անցնելու էք նեղ-նեղ կիրճերից ու ձորերից, ուր պարբերաբար ձեզ դիմաւորելու են էշի, ջորու, եզի եւ ձիու կարաւաններ, որոնք կորացած ծանր բեռի տակ՝ անվերջ տքալով բարձրանում են դէպի Բարձր Հայք։ Շրջապատն անտառ է կամ մացառ, էլ չէք տեսնի սեւ-սեւ հերկեր, ագարակներ. դալար է ամէն կողմ։ Անվերջ անտառ ու շամբ է, ուր վխտում են կթխան ու վիթը, գայլն ու արջը, վարազն ու կինճը եւ թռչունների երամակների երգն ու ճիչը օդն են թնդացնում։ Թորթումին նման են Նարիմանն ու Պարդուղը, Փէնէկն ու Փէնէզկերտը, Թաւնքարն ու Կիսկիմը, Պալխաբի ու Բալխի հովիտները, նոյնպէս Սպիրի երկար հովիտը եւ Բալախորը։

Փիսոնի ափերի ոսկեխառն աւազը վէպերի եւ պոէմների առասպելական նիւթ է մատակարարել նախապատմական շրջանից սկսեալ։ Ասորեստանի բռնակալ Սարգոնը ձգտել է Կիցկային ու Խալխալին նուաճել անշուշտ սրանց ոսկու հանքերին տիրելու տենչանքով։ Բալլիասը Ճորոխի Աւազանի վրայ յարձակուել է Ամիսոնական զօրքերով, նրա ոսկու հանքերը իւրացնելու